




Տարեկան գինը 10 ռուբլ, կես տարվանը 6 ռուբլ:

Առանձին համարները 7 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմյանիս խմբագրատան մէջ:

Մեր հասցեն. Тифлисъ. Редакция «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».

Խմբագրությունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տոն օրերէն):

Ցայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով:

Ցայտարարութիւնները համար վճարում են
խաւաքանչիւր բառին 2 կոպեկ:

ՆԵՐԿԱՅ 1889 ԹԻՒՆ

ՄՇԱԿ

ԴՐԱՄԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱՅԻՐ

Հրատարակվում է Թիֆլիսում, նոյն դիրքով և նոյն պրոպրիետարով: Մենք ստանում ենք սեփական ՀԵՌԱԳԻՐՆԵՐ:

«ՄՇԱԿ» տարեկան գինը 10 ռուբլ է, կես տարվանը 6 ռուբլ:
Գրվել «ՄՇԱԿ» կարելի է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ (Բարձրագույն և Բարձրագույն փողոցների անկյունում Թամարյանի տանը):

Կայտարարութեան ուրիշ զաղարկները «ՄՇԱԿ» գրվելու համար պէտք է դիմել հետևեալ հասցեով. ТИФЛИСЪ, Редакция газеты «МШАКЪ», իսկ արտասահմանից. Tiflis, Rédaction du journal arménien «MSCHAK».

Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐՇՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԳԱՌՈՒԹԻՒՆ

ՆԵՐԳԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Զիվանչիք գաւառի զրույթիւնը. Նամակ Բաղրուց. Նամակ Մոսկովայից. Ներքին լուրեր. — ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Խորհրդաւոր մահ. Արտաքին լուրեր. — ԽՈՒՐԵՐ. — ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. — ԲՈՐՄԱ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Արդարեւ հայկաթօլիկները.

ՆԵՐԳԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԶԻՎԱՆՉԻՔ ԳԱՌՈՒԹԻՒՆ

Եթէ կողմատու կայ մի յետ ընկած գաւառ, եթէ կայ մի վերին աստիճանի տգէտ ժողովուրդ, որը դեռ գտնվում է հնազարեան միջնորդի մէջ, դա Զիվանչիքի գաւառն է իր բնակիչներով հանդերձ: Մեր գաւառում ծաղկել, սկսած 1887 թւից մի զիվանչիք գաւառի—գալիս դեր է խաղում, անդադար բազմաթիւ գոհեր տանելով ամբողջ ազգաբնակչութիւնից: Բացի ծաղկից կան շատ սովորական հիւանդութիւններ, որոնք ծաղկից բոլորովին յետ չեն մնում: Ծաղիկը կոտորում է մանուկներին, իսկ միւս հիւանդութիւնները հասակաւորներին. և ամբողջ գաւառը, որը բուն է ամեն տեսակ հիւանդութիւնների, չունի ոչ բժիշկներ, ոչ էլ մի դեղատուն, որից կարողանար օգտվել խեղճ ժողովուրդը: Չնայ խմանում այս երեւոյթը վերագրենք տգէտ ժողովուրդին, որը բաց

չէ թողնում զանազան սուրբերի փէշը, թէ նրանց անտէրութեանը:

Լաւ է որ ծաղիկը և միւս հիւանդութիւնները աւերում են մեր գաւառը մի կամ երկու տարի, բայց կան ուրիշ մշտական հիւանդութիւններ, որոնք բնական ձեւը չեն վերցնում ժողովուրդից: Գրանք մեր ժողովուրդի ցեղերը—վաշխառու են և նրանք Բոլորին յայտնի է թէ ինչեր են անում այդ վաշխառուները. յայտնի է և այն, որ անցեալ տարի անընդհատ հեղեղների պատճառով զիվանչիքի զրկվեց իր ապրուստի միակ միջոցից—արտերից: Երբեք է այդ և մեր վաշխառուներին, որոնք երբ տեսնում են, որ ժողովուրդը նեղ դրութեան մէջ է, իսկոյն յայտնվում են և կարծես թէ ցաւելով խեղճ ժողովուրդի վրա, փող են բաժանում այնպիսի մեծ տոկոսով, որ երբ մարդ լսում է իր անախճներին չէ հաւատում, քանի որ տոկոսը միայն գումարից անցնում է: Եւ ինչ քաղաքից գալիս է Զիվանչիքի գաւառի հայաբնակ զիվանչիքի ու մի Գալիս, որը մեծ տոկոսով փող է բաժանում ժողովուրդի մէջ: Որպէս զի ընթերցողը հասկանայ լեզու անկողին բուն նշանակութիւնը, մենք մի օրինակ կը բերենք: Քաղաքից եկած այդ վաշխառու մէկ մանկէթի համար ստանում է մէկ լաք ցորեն (լաքը—28 ֆունտ), ուրեմն 100 մանկէթի համար—100 լաք կամ 10 շուալ ցորեն: Եթէ շուալը հաւենք այնպէս, ինչպէս ծախվում է միշտ, այսինքն հինգ ռուբլի, ուրեմն վաշխառու ստանում է 50 մանկէթ, իսկ եթէ հաւենք այնպէս, ինչպէս այս տարի է

ծախվում, այսինքն 8 ռուբլիով—ուրեմն նա ըստանում է 80 ռուբլի տոկոս: Աւելացրէք տոկոսը տոկոսը և ուրիշ խաղաղութիւններ, և դուք կը ստանաք աւելի քան ինքը գումարն է: Եթէ մի զիվանչիքի միամտութիւնն ունենայ յիշեալ վաշխառուից պարտք վերցնել 20 ռուբլի, նա էլ այդ վաշխառուից մինչև իր մահը չի պրծնի: Եթէ զիվանչիքները զգայուն լինէին, մեզ մօտ շատ անբաղդ Մանիներ կը գտնվէին... Ի նկատի ունենալով ամբողջ գաւառի ժողովուրդի անախճանքը, հասկանալի է, թէ ինչ առատ հունձ կարող են անել զանազան վաշխառուներ, որոնք իրանց հարստահարութեան մէջ օրէնքից անգամ չեն երկնալու, որովհետև օրէնքը նրանց հալածելու առիթ չէ դնում: Վաշխառուների դործունեութիւնը ամբողջ գաւառում դուրս է մնում օրէնքից, որովհետև այդ մարդիկ իրանց դործը այնպէս ճարտիւղութեամբ են առաջ տանում, որ երբեք դատարան ընկնելու երկիւղ չունեն...

Գաւառի ամբողջ ազգաբնակչութեան տնտեսական ճանապարհ հանգամանքներն էլ միւս կողմից, ի հարկէ, անհնարին են դարձնում զիվանչիքի համար վաշխառուների ձեռքից դուրս գալը: Աւելացրէք դրա վրա այս յետ ընկած, խոր քննութեամբ, «աշխարհի երես չը տեսած» ժողովուրդի անհասկացողութիւնը իր իրաւունքների և իր կեանքի մասին,—և դուք կը ստանաք այս գաւառի ազգաբնակչութեան իսկական պատկերը: Ժողովուրդի հարստահարութեան գործին շատ մեծ պէտք մասնակցում են ոչ թէ միայն զանազան բէշեր, և զանազան զօրքաւ անձինք, այլ նոյն իսկ զանազան եասաւուներ, որոնք ամենքն էլ իրանց կամայականութիւնների համար երբեք պատժվելու երկիւղ չունեն:

Զիվանչիք գաւառի ներքին կեանքը միանգամայն թափանցած է. դրսից ոչ մի աչք մինչև այժմ չէ թափանցել նրա ներքը. նրա ներքին ցաւերը յայտնի չեն եղել մինչև այժմ—և այդ կազմում է ամբողջ գաւառի ներքին ցաւերի զլխաւոր պատճառներից մէկը...

ՆԱՄԱԿ ԲԱԳՈՒԹՅՈՒՆ

Յունվարի 25-ին

Ամսիս 22-ին տեղի ունեցան Զիվանչիքում կայացած և. Լուսաւորիչ եկեղեցու երեսփոխի հաշիւաւորները: Ժողովը բաղմամբով չէր, չը

նով խնդրած կրօնական դատաւորներ (Վերականգնողական վարդապետութիւն) թուականի նման ընտրեցին անդիւր անել և կրկնելը, առանց միտքն ըմբռնելու, հոգեւոր և բարոյական դատաւարակութեան վերին տոտիճանն է կարծւում, և այլն և այլն: Գլխաւոր քաղաք, ուր, չնորհիւ այդպիսի անճոռնի և անկարգ կը թուլանան, մատաղ սերունդը մտաւորապէս բլթանում և անընդունակ է դառնում: Մինչև անգամ ինքնօգնութեամբ իրան համար վարել չափ մտաւոր պաշար պատրաստելու: Գլխաւոր հասարակութիւն, որ փոխանակ զարգանալու և կրթութեան մէջ առաջին քայլեր անելու, ընդհակառակն օրից օր խաւարի և մոլեռանդութեան է առաջնորդվում:

Արդարեւ 4,000 կաթօլիկ հայերի հետ միասին ապրում են շուրջ 1,000 հոգի լուսաւորչականներ: Բայց որքան տարբերութիւն կայ կրթական գործում այդ մեծ ժամանակ (կաթօլիկ) և պրոթէսթէնտ (լուսաւորչական) եղբայրների մէջ: Լուսաւորչականներն ունեն կարգաւորեալ ծխական դպրոցներ երկու սեռի առան-

ճառով, որ գործադրել երկու անգամ դրա մասին յայտարարել էր. ժողովը ակզբում հայր նախադառն առաջարկեց ժողովականներին, թէ ինչպէս են կամենում՝ կարգաւոր ընդհանուր հաշիւը, թէ նրանից արած քաղաքաւոր, որը արել են երկուսու գաղտնիքի հոգաբարձուները, որոնք առաջնորդի կողմից նշանակվել են վերաստուգելու երեցփոխի հաշիւները: Ժողովը ընդունեց երկրորդը, ուստի տէր-հայրը սկսեց կարգաւոր մուտքը և ծախսը, որից երեսուց, որ նախկին երեցփոխի օրով մուտք եղել է 3,000 ռուբլի, իսկ այս տարի 4570 ռուբլի, ուրեմն 1570 ռուբլիով աւելի: Պէտք է նկատել, որ ներկայ երեցփոխը մի տարի չը կայ, որ վարում է այդ պաշտօնը, որովհետև նա նախկին երեցփոխից գործերը ընդունել է անցեալ մայիսին: Եթէ մենք այս թւից դուրս գցելու լինենք ամառվայ երեք ամիսը, երբ Բագուի ժողովուրդի մեծ մասը բացակայ է լինում, և չեն լինում հանդէսներ, հարսանքներ և այլն, կերեւայ, որ 1570 ռուբլին 4 ամսվայ արդիւնք է, ուրեմն մի տարում այդ երեք ամիսը չէ երեք հաղարկ հասնել: Ներկայ եղող հասարակութիւնը լսելով այս կարճատեւ հաշիւը, բուն ծախսահարութեամբ և չնորհակալութեամբ վարձատրեց երեցփոխի պ. Ա. Ղուկասեանին թէ նրա կանոնաւոր և ճիշդ հաշիւապահութեան և թէ ջերմութեամբ գործունեութեան համար:

Այնուհետև պարոնը նախադաշի թոյլտուութեամբ մի քանի խօսք ասեց թէ իր հրաժարականի և թէ եկեղեցու գործերի վերաբերմամբ: Նախ և առաջ պարոնը չնորհակալութիւն զայտնեց հասարակութեան իրան արտապաշտած զայտնեց մանկների համար, կցելով, որ մի քանի հանգամանքների և իր տկարութեան պատճառով, ստիպւած է թողնել երեցփոխական պաշտօնը: Սակայն այդ պաշտօնը թողնելուց առաջ պ. երեցփոխը հարկաւոր համարեց եկեղեցական գործերի վերաբերմամբ իր մի քանի դիտողութիւններ անելու: Ամենքին վաղաք յայտնի է, ասեց պարոնը, հատկաւ հայ հասարակութեան թէ հարստութիւնը, և թէ առաւանձնութիւնը, մանաւանդ զէպի եկեղեցին, ուստի Բագուի եկեղեցին կարող է շատ հարուստ լինել և նոյն իսկ նրա դրամադլիսի տոկոսիցով կարող են ապահովել երկուսու դպրոցները, եթէ միայն երեցփոխները և եկեղեցու ապաստարանները հարկաւոր ուշադրութիւնը դարձնեն և հետեւեն:

Կան մի քանի նիւթական աղբիւրներ, որոնք կարող են եկեղեցուն բաւական օգուտ տալ,

ձին, փորձառու դատաստաններով և ուսումն ընթանում է որոշ ծրագրով ուր որ կաթօլիկացի ուսումնարաններում ծրագրել ենթարկված է լուսաւորչիկ ուսուցչի, այսինքն տէր-Մարկոսի կամ տիրացու Մարկոսի անձնական դատողութեան, հատկութեան աստիճանին և քէյֆին: Սակայն պէտք չէ կարծել թէ այս առաւելութիւնն յոգուտ լուսաւորչական հայաց, այս վերջինների չնորհիւ է անընդմիջապէս.—Ոչ երկու հասարակութիւններն էլ ինչպէս ծագմամբ արիւնակից, այդպէս էլ բարքով բարոյակից են. երկուքն էլ մտաւոր զարգացման կամ հասկացողութեան հարթերից (niveau) հաւասար և նոյն է գրեթէ. Թիֆլիսի վիճակային հոգեւոր վարկութեան միջաւորութիւնն, կարգաւորութիւններն են, որ զըլխաւորաբար ստիպում են լուսաւորչականներին թմրած չը մնալ իրանց դրացիների նման և շարժել ու գործել:

Երկու հասարակութեանց էլ դպրոցների եկամտի զլխաւոր աղբիւրն եկեղեցական մուտքերն են, բայց երբ լուսաւորչական եկեղեցին միայն 600 ռուբլի տարեկան եկամուտ ունի, կաթօլիկացի ունի անուազն 2,000 ռուբլի. իսկ թոշակաւոր աշակերտներ թէ մին ունի և թէ միւսը, սա տարբերութեամբ միայն որ լուսաւորչականներն աւելի մեծ թոշակ են վճարում, քան թէ կաթօլիկները: Ունենալ 2,000 ռուբլի եկամուտ և

*) Արդարեւ կաթօլիկացի և լուսաւորչական եկեղեցիները միմյանց կից են, բայց կաթօլիկացի եկեղեցին աւելի մեծ է քան լուսաւորչականացի, այդ պատճառով էլ առաջինները կոչվում են հասարակ ժողովուրդեան բարբառով մեծ ժամանակ, իսկ միւսները պոպուլի ժամանակ:

սակցութիւնները հաշտութիւն, ձեռք տալին մի-մեկին և իրանց խղճի արդար ձայնի թելադրու-թեամբ ձեռնարկէին գործին»

ԲԱԳՈՒՅՑ մեզ գրում են. «Այս վերջին ժամա-նակները պ. Մ. Շահէգանեանի գործարարի կե-րտինը, իր ազնիւ տեսակով, գրաւել է բոլոր միացած գործարարներին ուշադրութիւնը: Ա-մեն մի նաւթավաճառ աշխատում է այժմ Շահ-էգանեանի կերտինը ձեռք բերել: Յիշեալ գոր-ծարարը հազիւ կարողանում է բոլոր պահանջնե-րին բաւականութիւն տալ: Մինչև այժմ առաջին տեսակի կերտինը համարվում էր Նորիկ եղբայր-ներին գործարարի մշակված կերտինը, բայց վեր-ջին ժամանակները Շահէգանեանի կերտինը գերազանցեց նրան: Շահէգանեանի գործարարը ոչինչ չէ խնայում կերտինի ամենաազնիւ տեսա-կը պատրաստելու: Ի դէպ է ասել այստեղ, որ պարոնի գործարարը, առհասարակ, օրինակելի է պարոնի գործարար կազմակերպութեամբ և գործարա-նաւորի խղճմամբ վարմունքով դէպի իր բո-լոր ծառայողները»

Մեզ գրում են **ԳԻՒԽԱՆՆԻՑ** յունվարի 27-ից, որ եղանակը այդտեղ համարեա գարնանային է. ձիւնը և սառուցը հալվում են և յունվարի 27-ին արդէն անձրև եկաւ Գիւլիստան:

ՕԴԵՍՍԱՅԻՑ, յունվարի 23-ից, մեզ գրում են. «Երբեք սառելու պատճառով մի ամբողջ ամիս նաւադնացութիւնը դադարած էր: Յունվարի 18-ին եղանակը մեղմանալով և նաւահանգիստը փոքր ինչ աղաւթելով սառուցից, միւս օրը օ-տարերկրացի նաւերը մեկնեցան: Իսկ Բաթում մեկնող նաւերը առ այժմ դեռ չեն կարող կա-նոնաւոր կերպով կատարել իրանք երթևեկութիւ-նը: Յունվարի 20-ից սկսեց անձրևել Օդեսայում, իսկ յունվարի 22-ին անձրևը ամբողջ օր էր գա-լիս: Տեղին առևտուրը, իր միամեայ մեղեւո-թիւնից յետոյ սկսում է նորից կենդանանալ»

Կրօն Լորիս-Մելիքովի փոքր որդին՝ Զաքարիա Լորիս-Մելիքովի, Բաթումից թիֆլիս է եկել, ու այստեղ սպասում է իր մօրը և մեծ եղբորը, ո-րոնք արդէն հասել են Վաղրիկովազ և այս օ-րերս թիֆլիս կը գան:

Քաղաքային դռման յունվարի 30-ի նիստում աննշան փոփոխութիւններով հաստատեց ներկայ թւականի համար կազմած նախահաշիւը: Նոյն նիստում ձայնաւորները՝ ուշադրութիւն դարձրին և քաղաքի փողոցները մաքրելու վրա, որոնք ներ-կայումս գտնվում են ողորմելի դրութեան մէջ, լինէ քաղաքը մաքրելու վրա իւրաքանչիւր տարի ահապին փող է ծախսում, աւելի քան 30 հազար ռուբլի: Սակայն փողոցները մաքրութեան հարցի վճռելը դռման հարկաւոր համարեց յետաձգել, մինչև որ կը քննի ձայնաւոր Կոլտրանսկու ա-ռաջարկը՝ առողջապահական յանձնաժողով հիմ-նելու մասին:

ԱԽԱՅԻՍԱՅԻՑ մենք անդադր ստանում ենք նամակներ արևելքի դպրոցում պատահած խառ-նակութիւնների մասին: Ինչպէս երևում է թէ, դպրոցում և թէ ժողովրդի մէջ դեռ շատ տեսակ խառնակութիւնների նկիւթ է տալիս այն տեղը երևոյթը, որ դպրոցի վարչութիւնը ոստիկաններ է բերել տուել դպրոց՝ մի վարժապետի հեռաց-նելու համար: Պէտք է կարծել, որ տարածայնու-թիւնները կը պարզվեն, քանի որ թեմական ա-ռաջնորդարանը արդէն յատուկ քննիչ է նշանա-կել Ախալցխայի հայոց դպրոցներում պատահած խառնակութիւնները քննելու համար:

Մի քանի ժամանակ սրտնից առաջ գերմանա-կան մի քանի լրագիրներ լուր հաղորդեցին, որ Գորպատի համալսարանը պիտի փակվի և նոր ռուսաց համալսարան պիտի բացվի Վիլնյայում: Գերմանական մի քանի լրագիրներ, որոնց մէջ և «Leipziger Zeitung» այդ հարցը արդէն վճռված են համարում ռուսաց ժողովրդական լուսաւո-րութեան միջնորդութեան մէջ, և հաղորդում են, որ Գորպատում գոյութիւն կունենան միմյուրի-նեցէն և ղեկարարն (օրախոսութեամբ):

Կովկասեան Գիւղատնտեսական ցուցահանդիսի նախապատրաստութիւնները տեսնելու համար կազմված մասնագէտները, ինչպէս տեղեկա-նում ենք, բաւական եռանդուն կերպով գործում

են, և շուտով պատրաստ կը լինի թէ չինութեան և թէ մի քանի բաժինների վերաբերեալ ծրագրի-ները:

Մեզ հաղորդում են, որ Կովկասեան Գիւղատն-տեսական ընկերութեան առաջիկայ ընդհանուր ժողովում թիֆլիսում յայտնի ծխախոտագործ պ. Լեւիտանեան պիտի մի զեկուցում կարդայ ծխա-խոտագործութեան մասին, իրեն շարունակու-թիւն անցեալ տարի այդ մի և նոյն հարցի մա-սին արած զեկուցման:

ԳՐԻՍԻՍԻՑ մեզ գրում են հետեւեալը. «Գաւա-ռապետ Սուչնիկովսկի կարգադրութեամբ բժիշկ է գնացել Ղուբաթլու կոչված գիւղը, որտեղ ութ տարեց ի վեր շատ տարածված է սիֆիլիս հիւանդութիւնը, որպէս զի օգնութիւն հասցնի հիւանդներին: Բժշկական օգնութիւնը բաւական թիւով կցուցում է այդ վտանգաւոր հիւանդութեան տարածվելը, և եթէ օրինաւոր բժշկական ուշա-դրութիւն դարձնուի՝ անկասկած կարելի կը լինի մեծ օգնութիւն հասցնել գիւղացիներին»

Մեզ ուղարկված է Բօրչալուի գաւառի «Ար-ժուռական գիւղացիները տնտեսական կեանքը» վերնագրով ռուսերէն աշխատութիւնը, որը անդի-կովկասեան արքայական գիւղացիների տնտե-սական կեանքի ուսումնասիրութեան մի մասն է կազմում: Դա պ. Ա. Ներկեանի հետազոտութիւնն է: Գրքը, որ պարունակում է իր մէջ շատ հե-տաքերական տեղեկութիւններ, գրված է շատ պարզ և հարթ լեզուով, այնպէս որ կարդացում է շատ հեշտութեամբ, և լուսական նկիւթ կարող է տալ ժողովրդի կեանքին ծանօթանալ ցանկա-ցողներին: Հետազոտողի առաջ բերած տեղեկու-թիւններից երևում է որ Բօրչալուի գաւառի գիւղերի թիւն 98 է, 45,076 երկրահ. ընդհանրա-րոյ, որոնց ձեռքի տակ եղած հողը կազմում է 106,152 դեկտարին:

Յունվարի 28-ին կայացել է Բազուի հայոց Մարդասիրական ընկերութեան տարեկան ընդ-հանուր ժողովը: Մանրամասնութիւնները կը հա-ղորդենք միւս համարում:

ՄԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԽՈՐՀՐԴԱՒՈՐ ՄԱՀ

Բուդոֆի մահը, — ահա եւրոպական հասարա-կաց կարծիքի և մամուլի ուշադրութեան գիւսա-ւոր նիւթը: Երբեք անհայտ թաղաքապետի մահը մինչև անգամ չկրճ հետաքրքրութիւն է առաջ բերել նոյն իսկ մեզ մօտ, ուր շատ քիչ բան է արժանանում ժողովրդի անտարբեր ուշադրու-թեանը:

Սակայն այժմ անցել է այն բոլոր ցաւակցու-թիւնը, որը արտայայտեց ամբողջ Եւրոպայի բու-դոֆի մահվան առիթով: Նոյն իսկ Աւստրո-Ուն-գարիայում այդ մահվան առիթով ողբացողները դադարել են ողբալուց, այլ և քիչ է խօսվում հանդուցեալի անձնական արժանաւորութիւննե-րի, իրեղանքների, համակրելի ձգտումների և աղա-տաժիտ հայեազքների մասին: — Դրանք բոլորն էլ երկրորդական տեղ են ստացել և առաջին հար-ցը, որը այս րօպէիս հետաքրքրում և դադեց-նում է ամեն մի փոքր ի շատէ կրթված մարդու, դա հետեւեալն է: — Ինչն է այդ մահվան պատճա-ռը՝ եթէ Բուդոֆին սպանել են, և ինչն է այդ ինքնասպանութեան պատճառը՝ եթէ նա ինքն է իրան սպանել:

Մեր առջև տարակրօնների երկու կէտ կայ, այն է թէ արդեօք Բուդոֆին սպանել են, թէ ինքն է իրան սպանել: Մահվան առաջին օրի-ւում Վիեննայից հաղորդած լուրերը, որ իբրև թէ Բուդոֆի մեռել է կաթնաւորից, կամ արտի պայ-թիւնից, միանգամայն սուտ են: Այդ սուտը իս-կայն պարզվեց այն օրից, երբ նոյն իսկ Վիեննա-յի պաշտօնական լրագիրները ուղարկեցին հաղորդել միմեանց հակասող լուրեր: Պաշտօնական լրա-գիրների հաղորդած այդ միմեանց հակասող լու-րերի աղբեղութեան տակ՝ ամբողջ պետութեան ազգայնականութեան մէջ տիրապետեց մի տեսակ իրարանցում, ներքին յուզմունք, և ամենքը, թէ Աւստրիայում և թէ ամբողջ Եւրոպայում բարձ-րաձայն հարցնում էին: — Ինչն է այդ մահվան պատճառը...

Խորհրդաւոր մահ: Ամբողջ պետութեան թաղա-

ժառանգը, երբեք անհայտ, առողջ, լաւ ձգտումնե-րով ներշնչված, սիրված և յարգված, — յանկարծ մի օր գտնվում է մեռած իր անկողնում: Վիեն-նայի պաշտօնական լրագիրները հաղորդում են այժմ, որ նա ինքն է իրան սպանել, ատրճանակ արձակելով այլ այտի վրա, որտեղից դնտակը անցնելով դէպի գլուխը, դուրս է եկել գլխի ձախակողմեան վերին կողմից:

Սակայն հասարակաց կարծիքը չէ ուղղում հաշտել այդ մտքի հետ, և տրամադրված է կար-ծելու, որ Բուդոֆին սպանել են, և այդ սպա-նութեան մէջ քաղաքական պատճառներ են տես-նում: Եւ այդ րօպէին եւրոպական մամուլի մի նշանաւոր մասը Բուդոֆի մահը կապում է շատ ուրիշ անձանց մահվան դէպքերի հետ, որոնք վերջին տարիներում մեռան՝ նոյնպէս խորհրդա-ւոր կերպով:

Ո՛ր չէ յիշում երևելի Գամբետտայի մահը, որը դեռ այդպէս հասկում մեռաւ մի խորհրդաւոր ատրճանակ արձակվելուց, և մի րօպէին մէջ ամբողջ Ֆրանսիան զրկվեց այն Գամբետտայից, որի վրա հայրենիքը այնքան մեծ յոյսեր էր դրել...

Ամենքի յիշողութեան մէջ աւելի թաւր է Բա-ւարիայի բանաստեղծ-փղեպետ թագաւոր Լուդ-վիգի մահը, ոչոք դեռ չէ մեռացել ազատամարտ կայսր Ֆրիդրիխի մահը, և երբ ահա այդ կարգի, միանգամայն համակրելի մարդկանց մահը ամե-նապատ խորհրդածութիւնների նկիւթ է տալիս, յանկարծ մեռնում է աւստրիական թագաժա-ռանգը, մի իղեպետ երկաթաուղի, որի դահը բարձրանալուն անհամբեր սպասում էին Աւստրո-Ունգարիայի բոլոր ազգերը: — և այդ մահվան մէջ կրկին հանդէս է գալիս «խորհրդաւոր ատրճանա-կը» կամ զգալունի սպանութիւնը:

Եւ այդ բոլորից յետոյ ինքն ըստ ինքեան հարց է առաջ դալիս: — արդեօք այդ բոլորի մէջ չը կայ մի ընդհանուր պատճառ, մի ներքին գաղա-նի շարժառիթ...

Մենք մի փոքր աւելի իրաւունք կունենանք ենթադրելու, որ Բուդոֆի ինքնասպանութիւն է գործել, եթէ յիշուի նա իր հօր, մօր և կնոջ ա-նունով գրած նամակներ է թողել. ասում ենք յիշուի, որովհետեւ ճշդութեան մասին երաշխա-տելի չէ կարելի: Եւ քանի որ նամակների բու-վանդանութիւնը գաղտնի կը մնայ, քանի որ պաշտօնապէս չեն յայտարարվի սպանութեան մանրամասնութիւնները, այլ թաղանթ կը մնան կայսերական տան արխիւներում, — անպակաս կը լինեն ամեն տեսակ և ամենահամարձակ ենթա-դրութիւնները...

Հենց այժմ էլ այդ ենթադրութիւնները բաղ-մանդրամանի են, օմանք այդ մահը կապում են Աւստրիայի պետական այժմեան գործերի հետ, օժանդ այդ համարում են հետեւեալը Բու-դոֆին ընտանեկան յարաբերութիւնների, կան և ենթադրողներ, որ ասում են թէ այդտեղ սի-րահարական արկածը կայ, և որ իբրև թէ Բու-դոֆին մահը հետեւեալ է ամերիկական դուէլի կնոջ պատճառով, և այլն և այլն...

Այդ տեսակ ենթադրութիւններ անպակաս կը լինեն այդ խորհրդաւոր մահվան վերաբերմամբ, և այդ ենթադրութիւնները կը բազմապատկեն, աղբորակել հասարակաց կարծիքը, քանի որ այդ զգալուց դէպքը ծածկված է մեռած անթափան-ցելի վարդաւորով...

ՄԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐՆԵՐ

Բերլինի լրագիրներից ոմանք մեղադրում են աւստրո-ունգարական կառավարութեանը, որ նա ծածկում է Բուդոֆին մահվան վերաբերեալ խ-կական մանրամասնութիւնները:

— Սօֆիայից գրում են, որ բուլղարական կա-ռավարութիւնը նոր փոխառութիւն է արել Աւ-հասարակ Բուդոֆիայի ֆինանսական դրութիւնը դեռ մեծ փոփոխութիւններ է կարծա-բարձրվե-լու համար:

— Ինչպէս գրում են Փարիզից, Բուլանթէ իր ընտրութիւնից յետոյ՝ աւելի սեւա բարեկա-մական յարաբերութիւններ է հաստատել Գե-րուէլի հետ:

— Եւրոպական շատ արքունիքներում սուր է նշանակված աւստրիական թագաժառանգի մահ-վան պատճառով:

— Նիւ-Յորկից գրում են, որ վերջին ժամանակ-ներս Միացեալ-Նահանգները և գերմանական կա-ռավարութեան յարաբերութիւնները մի փոքր լարված են:

— Նորբա Միացեալ-Նահանգները և անգլիա-կան կառավարութեան մէջ յարաբերութիւններ սկսվեցան փոխադարձաբար յանցաւորներին յետ տալու պայմանագիր հաստատելու մասին: Այդ պայմանագիրը այս օրերս, ինչպէս գրում են Վաշինգտոնից, մերժվեց սենատի կողմից:

— Պէշտից համակրական ցոյցեր են արել գե-ներալ Բուլանթէին: Ձախակողմեանների պարա-գլուխներից մէկը շնորհաւորական հեռագիր ու-ղարկելով Բուլանթէին՝ յայտ է յայտնում, որ Բու-լանթէ յաղթութիւն կը տանէ չեքոսլոնացիների անտանելի լուծի» դէմ:

ԻՍՈՒՆ ԼՈՒՐՆԵՐ

Այս օրերս Լօնդօնի փողոցներում երեսց մի նորագիւտ օ մ ի ի ռ ու ս. դա է էլէկտրականու-թեամբ շարժվող օմնիբուսը, որը հասարակ փո-ղոցներում անց ու դարձ է տնում և աւելի ա-ռաջ է ընթանում, քան թէ ձիերով լծված կառ-քերը:

Շվեյցարիայի մի քանի տեղերում շինված լեռ-նային հրաշալի երկաթուղիները յայտնի են ամ-բողջ աշխարհին: Երևելի է, օրինակ, այն երկա-թուղին, որը բարձրանում է Բիլի անտառոված սարի վրա, նոյնպէս և անցեալ տարի աւարտած այն հրաշալի երկաթուղին, որը բարձրանում է Չորս Կանտոնների ծովափի եղիքին գտնված Պի-լատուս սարի վրա: Եւ ահա նոյն տարվայ աշ-նան աւարտվեց և մի ալ երկաթուղու գիծ, որը Չորս Կանտոնների ծովափի ավերից բարձրա-նում է 876 ոտնաչափ բարձրութիւն ունեցող Բիլգեյնտոկ սարը, որի գագաթին շինված է մի հրաշալի հիւրանոց: Այդ վերջին երկաթուղու գիծը շինված է անդուխտի պէս, որը 3,000 աս-տիճաններից է բաղկացած, իսկ գծի վրա երթևե-կող վագոնները շարժվում են էլէկտրականութեան միջոցով:

Ստրասբուրգի համալսարանի ուսանողները վճռել են վերացնել իրանց միջին միամարտու-թիւնը: Երբեք այդ վճռը ուսանողները կայացրել են Վիլհելմ կայսրի նկատողութեան աղբեղու-թեան տակ: Անկասկած ընթերցողները յիշում են, որ Վիլհելմ նորբա դժգոհութիւն յայտնեց, որ ուսանողների մէջ միամարտութեան դէպքե-րը շատանում են:

Ամերիկայի դաւաճ է դերասանների և դերա-սանուհիների համար... Այնտեղ դրանք ահապի-հարտութեան տէրեր են, և նրանցից շատերը ունեն 5 միլիոնից մինչև 10 միլիոն ռուբլի կա-րողութիւն: Իսկ մի միլիոն ունեցող դերասաննե-րին տասնեակներով կարելի է հաշուել... Թող չը վրդովվեն մեր չաղքատ դերասանները՝ այս տո-ղիքը կարգաւոր, — չէ որ մեր ու ամերիկացիներ-ի մէջ սար ու ձոր կայ...

Ամերիկայում այժմ մեծ անուն է հանել, մի էսկիմոսուհի օրիորդ: Գալով իր վայրենի հայրենիքից՝ Գրեյնլանդիայից, օրիորդը մտաւ միսիոնարների դպրոց, ուսում ստացաւ, ապա սովորեց անգլերէն, և այնքան առաջ գնաց, որ այժմ հանդէս է եկել Ամերիկայում իբրև հը-րապարակական դասախոս: Նրա դասախոսու-թիւնները մեծ ապաւորութիւն են թողնում Օ-րիորդի ազգանուն է Օլայ Կրամբէ: Հնուաբարբա-կան է և այն, որ մինչև այժմ շատերը համոզ-ված էին, որ էսկիմոսները անընդունակ են դէպի կրթութեան գործը...

Լէհացի յայտնի գրող Կրաչկովսկի մեռելով թողել է 92 հազար ռուբլի փող, մի շատ հա-րուստ, 40,000 հատորից բաղկացած գրադարան, և շատ ձեռագիրներ:

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՄՆԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆՆԻՑ

ԶԱՐԶՈՒ, 30 յունվարի: Մաղար և Երեմի հաս-նելով, ազանական էմիր Արդուրաման-խան սկսեց մահվան դատապարտել խախտ-խանի կողմնակիցներին: Դրա հետ միասին էմիրը այն-պիսի միջոցներ ձեռք առաւ, որոնք արտայայտում էին նրա անդունդանկութիւնը դէպի Ռուսաստա-նը. ընդհատված են առևտրական յարաբերու-թիւնները, աւելի շատացած են սահմանադիւլի պահանջները, և լուրեր են տարածված առաջի-կայ պատերազմի համար: Թէև, հաւանօրէն, այդ լուրերը պէտք է վերադրել էմիրի ցանկութեանը, որ նա ուղղում է աղբաղանկութեան ուշադրու-թիւնը հեռացնել ներքին գործերից և բարձրա-ցնել իր սեփական հեղինակութիւնը, բայց և այնպէս մեր կողմից անհրաժեշտ միջոցներ են ձեռք առնված՝ յանկարծակի թշնամական գոր-ծողութիւնների առաջն առնելու և խաղաղու-թիւնը վրդովելու փորձերը ճնշելու համար:

106700, 30 յունվարի: «Բեյաթի» դործակա-
լությանը հետագայում են կալվածվել, յունվա-
րի 27-ին (փետրվարի 10-ին) հետևելով: «Ար-
դարաման-խանը» այժմ գտնվում է ազգային
թուղթատանում, և մատուցվում են չորսապի-
կերը: զրա դործերը կարգի բերելու համար:
Ձինաբոված այժմիկ թիւը, որնց նա իր հետ է
վերցրել, մատուցող հասնում է 5,000 մար-
դու:

ՊԵՏԵՐԲՈՐԳ, 31 յունվարի: Պետական բանկի
կառավարիչ Յիմեն վանդանովը: «Новости» լը-
րագիրը հաղորդում է, որ ի դործագրվում են
1888 թվ. նոյեմբերի 18-ի Բարձրագույն հրամա-
նին, որը վերաբերում է երկաթուղիների տա-
րիֆների զեկավարվելուն: Ֆինանսների մինիստ-
րության յանձնելուն, այժմ, ֆինանսների, հա-
ղորդակցության ճանապարհների, պետական
կալուածների մինիստրների և պետական վերա-
քննիչի համաձայնությամբ, պետական խորհրդին
ներկայացրած է մի նախագիծ, որը վերաբե-
րում է այն միջոցներին, որոնցով կարելի է
կառավարական վերահսկողությունը հաստատել
երկաթուղիների վրա:

ՉԱՐՋՈՒ, 31 յունվարի: Այստեղ հասու Անդր-
կասպյան չորանապետը, չորանի շտաբի ղլխավորի
հետ միասին: Արդարախման ներկայումս
գտնվում է իր բաղմամբ թիկնապահներով Տաշ-
կուրդան-խուլում, Ամու-Կարիայից 32 վերստ հե-
ռու:

ՀՈՒՄ 31 յունվարի: Պապը արտասանեց մի
ճառ, որի մէջ յոյս էր յայտնում Ռուսաստանի
հետ ունեցած բանակցությունների աջողության
մասին: Եվսիսկոպոսներ նշանակելու հարցը դեռ
չէ վճռված:

ՓԱՐՔ, 31 յունվարի: Պատգամաւորների ժո-
ղովը 268 ձայների առաւելութեամբ ընդդէմ
222-ի, ընդունեց չորաններով ընտրվելուն անե-
լու սխտանայի վերականգնելու:

ԼՕՆԻՍ, 31 յունվարի: Լուր է ստացված ի-
տալական զորքերի Մասովայից կերեն գնալու
մասին:

ՊԵՏԵՐԲՈՐԳ, 1 փետրվարի: Փննելով «СВѢ-
ДВЕАЗЪ» լրագրի խմբագիր Եվսեյի գանգատը,
որը թիֆլիսի դատաստանական պալատի կողմից
դատապարտված է հարկը բուրի տուգանքի, մի
ֆեյետոնի համար, որով արատաւորում է հաշ-
տարար ժողովի անդամ Բլրդինին, անհաղ ար-
դարացրեց Եվսեյին, իսկ խմբագիր Ֆրէնկելի
գանգատի վերաբերմամբ, որը դատապարտված է
25 բուրի տուգանքի՝ նոյն Բլրդինին լրագրում
արատաւորելու համար, հաստատեց դատաւիճի-
ւը:

ՎԻԵՆԱ, 1 փետրվարի: Երէկ Պէշտում կայ-
սերական զոյղին ցոյց տուած ընդունելութիւնը
տխուր կերպարանք ունէր և մի և նոյն ժամա-
նակ հանդիսաւոր էր, թէն զրա հետ միասին
փողոցային ցոյցեր եղան Տիտայի դէմ:

ԲԵՐԼԻՆ, 1 փետրվարի: Շուտով տեղի կունե-
նայ Սաժմա կղզիների վերաբերեալ կոնֆերենցի-
այի բացումը: Անգլիայի և Գերմանիայի մէջ ար-
դէն տեղի է ունեցել կատարեալ համաձայնու-
թիւն:

ԲՈՒԴԱՊԵՍՏ, 1 փետրվարի: Իտալական կա-
ռավարութիւնը թագաւորութեան սահմանները
զուրս ուղարկեց 63 ռուսահպատակներ, որոնք
ձերբակալված են թախառական կեանք վարելու
համար:

ՏՕԿԻՍ, 1 փետրվարի: Եւսեյիայի կայսրը այ-
սոր դահլից հրատարակեց եւսեյիական նոր տա-
մանադրութիւն: Այդ առիթով եղան ժողովրդական
մեծ տօնախմբութիւններ: Սահմանադրութիւնը
կազմված է զերմանական սահմանադրութեան
նման: Պարլամենտը բաղկացած կը լինի երկու ժո-
ղովներից, աւագների ժողովից, որի անդամներն մի
մասը ընտրվում է իսկ միւս մասը պիտի նշանակվի
կայսրի կողմից, և համայնքների ժողովից, բաղ-
կացած 300 անդամից: Ընտրական իրաւունքը
կը վայելեն բոլոր քաղաքացիները, որոնք 20
տարեկան հասակ ունեն և վճարում են տարե-
կան 25 զուլար հարկ: Սահմանադրութիւնը նոր-
հում է նոյնպէս և կրօնական ազատութիւն, խո-
քի ազատութիւն և ժողովներ կազմելու իրա-
ւունք: Պարլամենտին տուած է օրենսդրական իրա-
ւունք և ֆինանսական դործերի վրա վերահսկո-
ղութիւն՝ սահմանադրութեամբ որոշված կանոն-
ներին համեմատ: Դատաւորները անփոփոխ են,
նրանք կարող են արձակված լինել միմիայն օ-
րենսդրական ճանապարհով:

Ս. ՊԵՏԵՐԲՈՐԳԻ ԲՈՐՍԱ	
Յունվարի 31-ին	
Լոնդոնի վրա 10 ֆունտ արծեւ	93 ր. 90 >
Համբուրգի վրա 100 մարկ	46 > 05 >
Փարիզի վրա 100 ֆրանկ	37 > — >
Ռիկի — արծեւ	7 > 49 >
Մարսայի կուզոններ	150 > 25 >
Արձաթիւ	1 > 14 >
Բորսայի դիսկոնտներ	6 և 71/40 >
Պետակ. բանկ. 5% տոմս 1-ին շրջանի	98 > 62 >
— — — — — 2-րդ —	98 > 87 >
— — — — — 3-րդ —	98 > 62 >
— — — — — 4-րդ —	98 > 62 >
— — — — — 5-րդ —	98 > 62 >
Ոսկեայ փոխաւութիւն	— > — >
Նոր 4% փոխաւութիւն	83 > 12 >
Արեւելեան 5% փոխաւութիւն 1-ին շրջ.	99 > 12 >
— — — — — 2-րդ —	99 > 12 >
— — — — — 3-րդ —	99 > — >
Ներքին 5% աւազին փոխաւութիւն	269 > 50 >
— — — — — Երկրորդ —	251 > — >
51/2% ընտաւ	102 > 50 >
Ոսկեայ ընտաւ	169 > — >
Եօթնորդ կոնսոլիդաց փոխաւութիւն	149 > — >
Նոր երկաթուղային ընտաւ	98 > 50 >
5% գրաւական թղթեր կալուած.	— > — >
— — — — — Բոլո. կրթ. ընկ. մտ.	151 > — >
— — — — — Թղթագ.	92 > 25 >
Գրաւ. թղ. Ալլու. բանկի	97 > 87 >
51/2% գրաւական թղթեր խեբուսի	— > — >
— — — — — կալուած բանկի	98 > 25 >
6% գրաւակ. թղ. Խարկովի կալ. բան.	101 > 50 >
— — — — — Պալատայի	101 > — >
— — — — — Պետ. Տուրի	101 > — >
— — — — — Կիւսի	101 > 25 >
— — — — — Մոսկվայի	101 > 50 >
— — — — — Բեռլինի	100 > — >
— — — — — Նիթ. Սամար.	100 > 50 >
— — — — — Վիլնայի	100 > — >
— — — — — Թիֆլիսի—72 և — տ.	— > — >
— — — — — Վոլոկայի—18 և — տ.	— > — >
Վճարված կանկի բանկի ակցիաները	720 > — >
Ռուսաց երկաթուղիների գլխաւ. ընկ.	235 > — >
Բիբրնիկ-Բոլոգոյի ընկ.	89 > 50 >
Ստիկայի քաղաք. օբլիգացիաներ	93 > 50 >
Օղէտայի — — — — —	94 > 75 >
Թիֆլիսի քաղաք. կրթ. ընկ. օբլ.	— > — >
Ս. Պետերբուրգի բորսայի արժանագրութիւնը	ամուր է:

Խմբագիր-հրատարակող ԳԻՏԻՆՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԻՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
(կուկիա, վճարողի արձանի հանդէպ)
Հիւանդներին ընդունում են ամեն օր
ԱՌԱՌՈՏՆԵՐԸ
ՆԱԽԱՍԱՐԴԵԱՆ—9—11 ժ. վարաւածական, նաեւ տատանցաւոր, սիֆիլիսի և աչքի ց.
ՐՈՒԳՎՈԿՍԿԻ—10—11 ժ. ներքին, երկխոյց և կանանց ց.
ԿԻՆ-ԲՈՒՇԿ ԻՍԱՀԱԿԵԱՆ—11 1/2—12 ժ. կանանց և երկխոյց ց.
ԲԵՆԿԵՎՍԿԻ—11—12 ժ. տղանցի, կոկորդի, քիթի ց. և սիֆիլիսի:
ԱՐՏԵՄԻՆՎ—12—1 ժ. երեքշաբթի, ուրբաթ և կիրակի կանանց ց.
ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—12—1 ժ. ներքին և երկխոյց ց. բացի կիրակի:
ԵՐԵՎԱՆԵՐԸ
ԳԱՐՈՍՄԿԻ—4 1/2—5 1/2 ժ. կաշուի ցաւերի և սիֆիլիսի.
ՆԱԽԱՍԱՐԴԵԱՆ—5 1/2—6 1/2 ժ.
ՓՈՒԼԻՆԵԱՆ—5 1/2—6 1/2 ժ. ներքին, երկխոյց և ջղային ց. (էկեղորոտեալիս):
Հիւանդանոցում է մանկաբարձ ԾՈՒՆԻ ՄՕՂԵՐ:
Վճար—50 կ. Համախորհրդի (կոնսիլիումի) համար փոխադարձ համաձայնութեամբ:
Հիւանդանոցի վերտեսուէ ՆԱԽԱՍԱՐԴԵԱՆ

Գանձակեց տպագրութեան
Փոխաբէն «ԻՍՏԱԿ» ժողովածուի Շէքսպիրի
ՀԱՄԼԵՏ
ԲԱՐԳՄԱՆՈՒԹԻՆ ՍԵՆԵԲԵՐԻՍ ԱՐԾՐՈՒՆԻ
1—5
Հրատարակիչ: ԲԱՐՍԵՂ ԲԱՍԱԼԵԱՆ

ВЪ ЖИРАДОВСКОМЪ СКЛАДѢ
Дворцовая улица, БАРАВАНСАРАЙ БЫВШ. АРЦРУНИ
ԺԻՐԱՐԴԵԱՆ ՊԱՀԵՍՈՒՄ
Դիւրեցովայա փողոցում, Նախկին Արժրուհի քարվանսարայում
ՍՏԱՅՎԱՍՏ ԵՆ
ԲՐԴԵԱՑ ՎԵՐՄԱԿՆԵՐ ամենաէժան գներից մինչև ամենաթանգ գները
ԴՕՆՆԵՐ և ԼԵՑՑՑ
8—10 (5)

«ԱՐԻՌԻ» ՎԱՅԱՌԱՆՈՑՈՒՄ
Ճախվում է
ՀԱՆԳՈՒՑԵԱԼ ԿՈՄՍ ԼՈՌՈՒՄԷԼԻԲԵԱՆԻ
Գրաւոր մեծագիր պատկերը: Գինը 30 կ., ճանապարհածախով 40 կ., նոյնը բարակ-գրեւ
թղթի վրա 15 կ. ճանապարհածախով 20 կ.: Մանր դրամի փոխաբէն կարելի է փոստի մարկ
ներ ուղարկել: Գինը՝ Թիֆլիս, редакция «Агбур».
2—3

ВЫСОЧАЙШЕ УТВЕРЖДЕНОЕ
Российское Общество Застрахованія капиталовъ и доходовъ
УТВЕРЖД. ВЪ 1835 ГОДУ
ԲԱՐԱՐԱԳՈՅՆ ՀԱՍՏԱՅՎԱՍՏ
Ռուսաց ընկերութիւն կապիտալների և եկամուտների ապահովութեան
հիմնված 1835 թվին
Ամենահին և միակ ռուսաց ընկերութիւն, որը բացառապէս պարապում է կանքի (կապիտալների
և եկամուտների) ապահովութեան գործով, փոխադարձութեան սկզբունքների վրա:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐԱՄԱԳԼՈՒԻ 8,000,000 ՐՈՒԲԼԻ
1. Կապիտալների ապահովութիւնը յԱՍԱՆԳՈՒԹԵԱՆ համար, ապահովացնողի մահուան դէպքում
2. Կապիտալների ապահովութիւնը ԾԵՐՈՒԹԻՆՆԸ և երեխաների համար ԲԱԺԻՆԲԸ ապահովացնելու
համար:
3. Եկամուտների և ցմա՝ նշանակվող ԹՈՇԱԿՆԵՐԻ ապահովութիւնը:
Տարիները և մանրամասն տեղեկութիւնները ուղարկվում են անվարձ ԳԼԽԱՌՐ ԳՈՐԾԱԿ
ԼՈՒԹԵԱՆ կողմից, որը գտնվում է Թիֆլիսում, Վերամիքովայա փողոց, տուն № 24.
Գլխաւոր Ագէնտ և Տեսուչ Կովկասեան երկրի համար՝ Ն. Ն. ԳՐՈՒՋԷՆԵՐԻ:
ՊԱՀԱՆՉՎՈՒՄ ԵՆ ԱԳԷՆՏՆԵՐ ԵՒ ԱՇԽԱՏԱԿԻՏՆԵՐ
Թիֆլիսի և կովկասեան ուրիշ քաղաքների համար: 32—32 (2)

1839 Г. 50-ЫЙ ЮБИЛЕЙНЫЙ ГОДЪ 1889 Г.
МУЗЫКАЛЬНОГО ЖУРНАЛА
„НУВЕЛЛИСТЪ“
Въ наступающемъ 1889 году «НУВЕЛЛИСТЪ» кончаетъ первое, полуѣтковое свое существо-
вание. Пользуемся этимъ случаемъ, чтобы выразить нашу глубокую благодарность: музыкаль-
нымъ дѣятелямъ, какъ отечественнымъ, такъ и иностраннымъ, помогавшимъ намъ вести наше
изданіе, и публикѣ, сочувствіе и поддержка которой давала намъ возможность служить высокой
задачѣ, полѣзка назадь ставшей девизомъ «НУВЕЛЛИСТА».
Оглядываясь на тяжелое прошлое, пережитое нашимъ журналомъ, мы не безъ гордости
высказать можемъ, что силы и энергія потраченные редакціею на неустанное, полуѣтковое ве-
деніе своей нелегкой работы, нашли себѣ достойную оцѣнку въ средѣ русскаго общества и въ
средѣ русской семьи по преимуществу. Предоставленные самимъ себѣ и никогда не пользова-
ны прямо, ни косвенно, посторонними субсидіями, мы черпали—и духовныя и матеріальныя
средства для веденія журнала только въ общественномъ сочувствіи нашему дѣлу. Это дорого
намъ сочувствіе нынѣ и возлагаетъ на насъ обязательство, продолжать наше изданіе и, по мѣ-
рѣ возможности, его совершенствовать.
Желая достойнымъ образомъ ознаменовать окончаніе перваго полуѣтка существованія
«НУВЕЛЛИСТА», редакція рѣшила дать въ этомъ юбилейномъ году цѣлый рядъ пьесъ выда-
ющихся композиторовъ, какъ русскихъ, такъ и иностранныхъ, написанныхъ исключительно для
юбилейнаго года «Нувеллиста».
Въ юбилейномъ году будутъ помѣщены сочиненія, между прочимъ, слѣдующихъ музы-
кальныхъ авторовъ: Рубинштейна, Чайковскаго, А. Н. Сѣрова («Ноктюрнъ» принесенный въ
даръ редакціи «Нувеллиста» для юбилейнаго года, сестрою композитора), Направника, Иванова
Соловьева, Дюбюка, Главача, Бориса Шель, Зике, Мамарова, Капри, Тивольскаго, Малашиина,
Лишина (посмертное сочиненіе), Гуно, Сенъ-Санса, Массенѣ, Годара, Рейнеке, Шарвенка, Мош-
ковскаго, Штрауса и мног. друг.
«МУЗЫКАЛЬНО-ТЕАТРАЛЬНАЯ ГАЗЕТА»
будетъ выходить въ продолженіи музыкальнаго сезона—въ январѣ, февралѣ, мартѣ, апрѣлѣ,
сентябрѣ, октябрѣ, ноябрѣ и декабрѣ.
ПРЕМІЯ ЮБИЛЕЙНАГО ГОДА.
Эта премія будетъ состоять изъ большаго художественнаго альбома, въ которомъ будутъ
помѣщены автографы знаменитыхъ музыкантовъ, наброски извѣстныхъ художниковъ и портреты
выдающихся музыкальн. дѣятелей.
Въ портфелѣ редакціи находятся между прочими письма, манускрипты, записки и пр.
нижеприслѣдующихъ музыкальныхъ дѣятелей: Русскихъ: Алябьева, Балакирева, Бахметева, Бу-
лахова, Варламова, Глинки, Гурилева, Гензельта, Даргомыжскаго, Дюбюка, Давыдова, Дрейш-
ка, Моношко, Мусоргскаго, Контскаго, Направника, Рубинштейна, Сѣрова, Чайковскаго, Уль-
бышева и друг. Иностранныхъ: Беріо, Блуменгала, Ш. Велле, Вьегана, Горіа, Гуммеля,
Делера, Гордиджани, С. Геллера, К. Майера, Мендельсона-Бартольди, Куллака, Листа, К.
Шуманъ, Роберта Шумана, Серве, Пансерона, Фегиса, Фильда, Эрста и друг.
Несмотря на большія затраты на изданіе альбома, въ Юбилейный годъ редакція не уве-
личиваетъ цѣну.
Подписная цѣна 5 руб., съ доставкою и пересылкою 6 руб. подписка принимается: Въ
С.-Петербургѣ, въ главной конторѣ «Нувеллиста» при музык. торговлѣ М. БЕРНАРТА, Невскій
пр. № 64, уголъ Караванной ул. противъ Аничкина дворца. Въ Москвѣ, въ муз. магазинѣ П.
И. ЮРГЕНСОНА.
2—3